

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И Я

ՄԻ ՈՒՂՂՈՒՄ ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ԲՆԱԳՐՈՒՄ

Վ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խոսքը վերաբերում է Սայաթ-նովայի «Աշխարհ մե փանջաղա է» հայտ-
նի երգի հետևյալ տողին.

Ղուրթս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալի սուտն¹:

Ընդգծված արտահայտությունը, որ Գևորգ Ախվերդյանից սկսած նույ-
նությամբ տպագրել են սայաթնովյան խաղերի բոլոր հրատարակիչներն-
առանց բացառության, երգչի ինքնագիր Դավթարում ունի «խալի սուտն» ըն-
թերցվածքը.

Լոյրտս յեղդուր յանջա Բջ ջեղմ ՅաԹԱՅԻՆ Ե ԵԱԼ Ո Ն Մ Ե Ն.

[Ղուրթս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալի սուտն]²,

Մանրագրելով իր կատարած փոփոխությունը (խալի > խալխի), Գ. Ախ-
վերդյանը միայն նշել է հետևյալը. «էս խաղի մե քանի օրինակներումն գրած
էր խալի, ևս խաղ ասողներն երգելիս ասում են խալի սուտն (սուտ, շինած
սևանիշն)»³:

Այսպես ուրեմն, Գ. Ախվերդյանի հավաստի վկայությամբ՝ «Աշխարհ մե
փանջաղա է» երգը կատարելիս «խաղ ասողները» գործածել են խալի սուտն
տարբերակը, որը լիովին համապատասխանում է Դավթարի գրությանը:
Իայց այս համապատասխանությունը, որն ինքնին շատ կարևոր իրողություն է,
դուրս է մնացել աշխատասիրողի ուշադրությունից, որովհետև նա ճիշտ չի
հասկացել խալի բառի իմաստը: Խալի սուտն արտահայտության բացատրու-
թյունից պարզորոշ երևում է, որ Գ. Ախվերդյանը խալի-ն ըմբռնել է իբրև խալ
(այսինքն՝ ծին, պուտ, պիսակ, նիշ) բառի սեռական հոլով (խալի սուտն-
սուտ, շինած սևանիշն): Բնական է, որ այս ընկալման դեպքում, որով Սայաթ-
նովայի տողը ձեռք էր բերում մի անհնթեթ բովանդակություն (ճշմարտու-
թյունն այն պատճառով ճանապարհ չի գտնում, որովհետև շատացել է խալի
կեղծը կամ՝ արհեստական, սարքովի խալը), գիտնականը պիտի ենթադրեր,
թե գործ ունի գրչական վրիպման հետ, և բնագրի խալի-ն փոխարիներ տրա-
մաբանորեն ամենահավանական մի այլ ընթերցմամբ, տվյալ պարագային՝
խալխի բառով: Այսպես է վարվել Գ. Ախվերդյանը, մանավանդ որ Դավթարն՝
առհասարակ և սույն խաղի գրությունը՝ մասնավորապես, նման ենթադրու-
թյան համար տալիս էին բավարար հիմքեր՝ խաղի ինքնագրում, օրինակ, հա-
մաշա բառի փոխարեն արձանագրված է հաշա (ՅաՅա), նալաթ ըլի-ի փոխա-
րեն՝ նալ ըլի (Նալ ըլո)⁴:

Մինչդեռ խնդրո առարկա տեղում Դավթարի և «խաղ ասողների» համա-
պատասխանությունը, որն ունի նուրբ բնույթ, հնարավորություն է ընձեռում
հարցին տալ այլ ընթացք ու լուծում: Եթե խալի ձևը գրչական վրիպման ար-

1 Գուանթ. Կ. Ա, «Սայաթ-նովա», լուս դրած աշխատասիրութենով Գեորգիս Ախվերդյան.
Մոսկվա, 1852, էջ 136:

2 Սայաթ-նովա. Խաղեր, նմանահանություն. Երևան, 1963, էջ 133, տող 11:

3 Գուանթ. էջ 137—138 (ընդգծումները Գ. Ախվերդյանինն են):

4 Սայաթ-նովա. Խաղեր, նմանահանություն, էջ 133, տող 4, 13:

դյունք է, նշանակում է՝ երգողների սխալ արտաբերությունը ծագած է եղել Դավթարից: Իսկ եթե նրանց իմացությունը կապ չի ունեցել հեղինակային ձեռագրի կամ այդ ձեռագրից կատարված արտագրության հետ, ուրեմն պիտի մտածել, որ համապատասխանությունը ոչ թե պատահականություն է, այլ օրինաչափություն, և ճիշտը հենց այդ բանն է (խալի):

Արդ, «Աշխարհս մե փանջարա է» երգը «խաղ ասողները» կատարել են Դավթարի՞ց արտագրված տարբերակի հիման վրա, թե՞ Դավթարից անկախ՝ երգի բանավոր յուրացման, լսածը գրառելու և այդ կերպ տարածելու ճանապարհով:

Առաջին հնարավորությունը բացառվում է հետևյալ պարզ պատճառով:

Սայաթ-Նովայի Դավթարը դեռ XVIII դարի 80-ական թթ. պահվում էր Մոզդուկում, երգչի՝ այնտեղ բնակություն հաստատած ժառանգների մոտ: Եվ այդ ձեռագիրը երկար ժամանակներ անմատչելի էր Թիֆլիսին ու թիֆլիսահայությանը: Միայն XIX դարի 40-ական թթ. սկզբներին էր, որ աշուղի թողը՝ Թիֆլիսում կրթություն ստացած և տեղի Զգրաշեն եկեղեցում ավագ քահանա կարգված տեղ Մովսեսը, լինելով Մոզդուկում իր քրոջ տանը, այնտեղ հանկարծ տեսնում է պապի ձեռագիրը և այն հետը տանում է Թիֆլիս ու որոշ ժամանակ անց, ընդառաջ գնալով բժիշկ Հ. Փոնդոյանի աղաչանքներին, տրամադրում Գ. Ախվերդյանին (1848 թ. մայիս): Ուրեմն՝ «Աշխարհս մե փանջարա է» խաղը նույնպես, որ այդ ընթացքում շարունակ երգում էր թիֆլիսահայը, «խաղ ասողները» չէին կարող սովորած լինել Դավթարին հաղորդակցվելու ճանապարհով:

Մնում է հանգել հակառակ հետևությունը: Հայտնի փաստ է, որ Սայաթ-Նովայի ստեղծագործությունները թիֆլիսահայության մեջ լայն տարածում և արտակարգ մեծ ժողովրդականություն էին ձեռք բերել աշուղի տաղանդի ու փառքի հռչակման ժամանակից: Եվ նրա խաղերը ժողովրդական երգիչները վերակրկնում և սերնդեսերունդ իրար էին փոխանցում Դավթարից անկախ՝ դեռևս հեղինակային կատարումներից պահպանված հիշողությամբ, երբեմն աղավաղելով երգը, երբեմն էլ հարազատ մնալով բնագրական նրբերանգներին: Հայտնի է, որ հենց այդ հիշողության շնորհիվ հետագայում գրավեցին նաև այն խաղերը, որոնք տեղ չէին գտել երգչի ձեռագրում: Հիմնականում «խաղ ասողների» հիշողությամբ հնարավոր դարձավ կորստից փրկել Սայաթ-Նովայի խաղերի երաժշտական մեղեդիները: Եվ վերջապես՝ այս ճանապարհով էր, որ մինչև Դավթարը ձեռքն առնելը, Գ. Ախվերդյանն արդեն ծանոթ էր Սայաթ-Նովայի որոշ ստեղծագործությունների, այդ թվում նաև «Աշխարհս մե փանջարա է» խաղի զանազան տարբերակներին. «էս խաղի մե քանի օրինակներում գրած էր... ևս խաղ ասողներն երգելիս ասում են...»:

Նկատի ունենալով այս ամենը, կարելի է ասել, որ Սայաթ-Նովայի ձեռքով Դավթարում գրանցված խալի-ն, որը հիշողությամբ պահպանած են եղել նաև ժողովրդական երգիչները, ոչ թե ուղղման ենթակա սխալ գրություն է, այլ չհասկացված բառ: Դա Սայաթ-Նովայի բառապաշարին խիստ բնորոշ արաբա-պարսկական բազմաթիվ փոխառություններից մեկն է՝ خلیع [խալի']՝ բառ, որն արտահայտում է անպատկառ, անամոթ, լկտի, լլիռ իմաստը⁵:

Այսպիսով, սույն բացատրությամբ «խալիսի նոթարի» տողը նորից վերստանում է «Ղուրթըս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալի սուտն» դավթարային ընթերցումը՝ «Ժշմարտությունն այն պատճառով ճանապարհ չի գտնում, [որովհետև] շատացել է լկտի սուտը» բովանդակությամբ:

⁵ Персидско-русский словарь, составил проф. Б. В. Мяллер. М., 1953, с. 197; Х. К. Баранов. Арабско-русский словарь, М., 1977, с. 234.